# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ - 362 - 2025
# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ ԵՎ ՆԱԽԱԳԾԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆՊԱՍՏ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «31» 10. 2025թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Նպաստ տրամադրող), ի դեմս գլխավոր քարտուղար Հասմիկ Հակոբյանի (ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա), մի կողմից և Ռուբեն Սմբատյանը (այսուհետ՝ Նպաստ ստացող) (անձնագիր՝ AU 0269538, տրված՝ 14.05.2021թ.-ին, 011-ի կողմից) մյուս կողմից, հիմք ընդունելով կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի փետրվարի 4-ի թիվ 171-Ա/2 հրամանով հաստատված դրույթները, «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի N 2060-Ն որոշմամբ հաստատված «1168. Արվեստների ծրագիր» ծրագրի «11005. Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման կատարումն ապահովելու նպատակով կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով նախատեսվում է նպաստ տրամադրել 2025 թվականի հոկտեմբերի 1-ից 10-ը Մոսկվա քաղաքում կայացած «Մոսկվան դիմավորում է ընկերներին» XXII-րդ միջազգային փառատոնին՝ հոկտեմբերի 5-7-ը Ռուբեն Սմբատյանի դստեր՝ Մարիամ Սմբատյանի, մասնակցության նպատակով Երևան-Մոսկվա-Երևան ավիատոմսի համար 153700 (մեկ հարյուր հիսուներեք հազար յոթ հարյուր) դրամի (այսուհետ՝ Նպաստի գումար) չափով:

## 2. ՆՊԱՍՏԻ ԳՈՒՄԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1. Նպաստի գումարը տրամադրվում է Նպաստ ստացողին՝ Պայմանագրով նշված բանկային հաշվին՝ դրամական միջոցների փոխանցման միջոցով: Նպաստի գումարի փոխանցումը կատարվում է պայմանագրի կնքման պահից տասն աշխատանքային օրվա ընթացքում:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. **Նպաստ տրամադրողն իրավունք ունի՝**

3.1.1.Նպաստ ստացողից պահանջել հատուցելու Նպաստի գումարն ընդունելուց հետո հրաժարվելու հետևանքով իրեն պատճառված իրական վնասը:

3.1.2.Նպաստ ստացողի կողմից ներկայացված հաշվետվության հետ կցվող անհրաժեշտ փաստաթղթերի իսկությունը չհամապատասխանելու դեպքում միակողմանի լուծել պայմանագիրը:

3.2. **Նպաստ տրամադրողը պարտավոր է՝**

3.2.1.Պայմանագրի 2.1 կետով սահմանված կարգով Նպաստ ստացողին փոխանցել Պայմանագրի 1.1 կետով սահմանված Նպաստի գումարը:

3.3. **Նպաստ ստացողն իրավունք ունի՝**

3.3.1. Մինչև Նպաստի գումարն իրեն հանձնելը ցանկացած պահի հրաժարվել դրանից: Այս դեպքում Պայմանագիրը համարվում է լուծված:

3.4. **Նպաստ ստացողը պարտավոր է՝**

3.4.1. Ընդունել Նպաստի գումարը:

3.4.2. Հատուցել Նպաստի գումարը փոխանցելուց հետո, դրա ընդունելուց հրաժարվելու հետևանքով Նպաստ տրամադրողին պատճառված իրական վնասը:

## 4. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

4.1. Նպաստ ստացողը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում իր կողմից ներկայացված փաստաթղթերի իսկության համար:

4.2. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

4.3. Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

4.4. Պայմանագրում փոփոխությունները և լրացումները կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

4.5. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ՎԱՎԵՐՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՆՊԱՍՏ ՏՐԱՄԱԴՐՈՂ | ՆՊԱՍՏ ՍՏԱՑՈՂ |
|---|---|
| Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | Ռուբեն Հենրիկի Սմբատյան |
| Ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք | Ք.Երևան, Աբովյան փ., շ.38, բն.7 |
| ՀՀ ՖՆ գործառական վարչություն | Անձնագիր՝ AU 0269538, տրված՝ 14.05.2021թ.-ին, 011-ի կողմից |
| Հ/Հ 900011032878 | «Յունիբանկ» ԲԲԸ |
| ՀԿՀՀ 02698732 | Հ/Հ 24100070713306 |
| Գլխավոր քարտուղար՝ | էլ. փոստ՝ rubensmbatyan@gmail.com |
| | Հեռ.՝ 055 46 90 50 |
| Հ. Հակոբյան | Ռ. Սմբատյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |

Կ.Տ.